ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 մարտի 2014 թվականի N 15-Ա

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 164-րդ հոդվածների դրույթներով և համաձայն <<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա. Վարդանյանի անձնական դիմումի , **կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1.<<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արարատ Վարդանյանին 2014թվականի մարտի 19-ից ապրիլի 18-ը ներառյալ տրամադրել իր ամենամյա և լրացուցիչ արձակուրդը:

Հիմք. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 164-րդ հոդվածներ, Ա. Վարդանյանի անձնական դիմումը:

2.Արարատ Վարդանյանի արձակուրդում գտնվելու ընթացքում ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել կազմակերպչական գծով տեղակալ Ա.Մարտիրոսյանի վրա:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ *Վ. ՀԱԿՈԲՅԱՆ*

2014թ. մարտի 19
ք. Կապան